

բնագրէն մասեր դուրս թողուած են եւ տեղերը  
 կէտերով նշանակուած: Այս բաց թողուած մա-  
 սերը հաճեցաւ նա ինքն Հ. Յ. Թորոսեան հա-  
 ղորդել ինձ ըստ խնդրանացս, եւ ես առթիւս կը  
 հրատարակեմ, որով Երեմիայի այս մասին  
 գրածները կ'ամբողջանան: Ընթերցողներու դիւ-  
 րութեան համար "Հ. Ամ.", ի հրատարակու-  
 թիւնը կը նշանակեմ: "Հ. Ա." էջ 272աբ  
 "... աշխարհականաւ միով Յովանէս անուամբ  
 առաքել նուիրակս մեռնիւ սրբով ի քաղաքս: ",  
 կը շարունակուի բնագրին մէջ՝ "նուիրակք  
 ոմանք էմրով պէրաթի սուրէթով պոռնիկք եւ  
 բողարածք աշխարհականք յաշխարհականաց  
 ապականեցին խանգարեցին զկարգ սուրբ եկե-  
 ղեցական ի Թրակիա եւ ի Մակեդոնիա եւ յեզր  
 Տանաւիս գետոյ եւ ի Փոքր յԱսիա. մինչեւ եկն  
 եհաս հոգեւոր տէրն ի վարդապետութեան  
 իւրում ի քաղաքս լեալ հաճութեամբ ամենից  
 հոգեւոր առաջնորդ Բ ամաւ յառաջ քան  
 զգնալն Փիլիպպոս կաթողիկոսի ի սուրբ Երու-  
 սաղէմ:", (Կ'ականարկէ Եղիազար [Կթղսն.] վ.  
 Անթապցի, Պտրք. Կ. Պոլսոյ 1650—51:) Յետ  
 մուղնեցւոյ Յովանէս վարդապետի դարձեալ  
 կալան աշխարհականք. վերջինս չար երեւեալ  
 քան զառաջինն. յորոց ժամանակի հասանէր  
 Թումայան վարդապետ ոմն Հալեպցի պատրիարք  
 նստեալ, զոր սպանին դառն կենօք: (Ասիկայ  
 Կղեմէս Կալանոսի եւ յետոյ Բորբականտայի  
 աշակերտ կաթողիկէ էր. Հռոմէն եկաւ եւ  
 Ադրիանուպոլիս պատրիարքական "պէրաթ",